

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կուրայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Կուրայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Արա Մանուկյանի անվան մանկապարտեզական մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Տնօրենը Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Արա Մանուկյանի անվան մանկապարտեզական մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ, օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում կատարում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը ու գործունեությունը, կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Հաստատության տնօրենը՝

- ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.
- բ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.
- գ) տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
- դ) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
- ե) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
- զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
- է) արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- ը) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.
- թ) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
- ժ) գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը պատճառած վնասի համար
- ի) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝

1. Կրկիմ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները ,ովքեր ունեն՝

- 1) բարձրագույն կրթություն.

- 1) համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ , եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.
 - 2) տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):
2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝
- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
 - 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
 - 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
 - 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
 - 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
 - 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- 3) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.
- 4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
- 5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել.
- 6) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26 մարտի 2020թ. թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են.
- 7) 65 տարին լրացած քաղաքացիները:

Մրցույթը կկայանա 15.06.2023թ. ժամը 11⁰⁰-ին Չարենցավանի համայնքապետարանի շենքում /ք. Չարենցավան/:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

- դիմում.
- մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- ինքնակենսագրություն.
- անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

- հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով, կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10⁰⁰-16⁰⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Չարենցավանի համայնքապետարանի շենքում /ք.Չարենցավան Կ.Դեմիրճյան հրապարակ, վարչական շենք, 202 սենյակ, հեռ. /0226/ 4-34-34/:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2023 թվականի հունիսի 5-ը ներառյալ:

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ